

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԼԳԲՏ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԵՎՐՈՊԱՅՆԵՐԻ  
ԲԱՑ ՆԱՄԱԿԸ՝ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻՆ

## ԿՈՆՏԵՔՍՏ

Վերջին մի քանի տարիների ընթացքում քննարկումներ են տարվում կապված հակառետրովիրուսային դեղարայքի (ՀՌՎ) կարևորագույն դերի մասին ՄԻԱՎ-ի կանխարգելման կոմպլեքս ռազմավարությունների մեջ: ՀՌՎ-ի կիրառման ուղիներից մեկն է հանդիսանում նախակոնտակտային կանխարգելումը (PrEP): Այս մոտեցումը ենթադրում է կոնկրետ ՀՌՎ դեղորայքների օգտագործում ՄԻԱՎ բացասական կարգավիճակ ունեցող մարդկանց վարակելու վտանգը նվազեցնելու համար, ովքեր ենթարկվել են վարակման ռիսկին: 2012թ-ին ԱՄՆ-ի սննդի և դեղորայքային միջոցների վերահսկման մարմինը (FDA) հայտարարեց, որ հավանություն է տալիս տենոֆովիր/եմտրիցիտաբին դեղորայքների համակցության օգտագործմանը (ապրանքանիշի անվանումը «Տրուվադա») նախակոնտակտային կանխարգելման նպատակով: Ներկայումս Եվրոպայում կանխարգելման համար տվյալ համակցությունը հասանելի չէ, բացի գիտական հետազոտություններում ընդգրկված մարդկանցից:

Վերջերս, երկու խոշոր եվրոպական գիտական ուսումնասիրություններ՝ անգլիական PROUD և ֆրանսիական IPERGAY, հաղորդում են ՄԻԱՎ-ի նախակոնտակտային կանխարգելման հետազոտություններում մինչ այժմ նկատված արդյունավետության ամենաբարձր մակարդակը:

Այս արդյունքները իրենցից իսկական առաջընթաց են ներկայացնում: ԵՄ-ն վաղուց արդեն պետք է թույլատրեր կիրառել այն ռազմավարությունները, որոնք արդեն 2012թ-ին հաստատվել էին ԱՄՆ-ում և կիրառվում են ԱՄՆ-ի առնվազն 12500 մարդկանց կողմից:

Եվրոպայում նախակոնտակտային կանխարգելման նպատակով ՀՌՎ-ի օգտարգործման թույլատվության հետ կապված հարցերը դեռևս միանշանակ պատասխաններ չունեն: Ի՞նչ չափանիշներով է մարդկանց նշանակվելու PrEP: Որտե՞ղ և ի՞նչպես են առաքվելու դեղորայքները: Ո՞վ պետք է վճարի դրանց համար: Ի՞նչպես պետք է PrEP-ը համաձայնեցնել տարբեր խուցելի խմբերի պահանջմունքների հետ: Սակայն վերը նշված խնդիրներից ոչ մեկը անլուծելի չէ: Հաշվի առնելով լրացուցիչ հնարավորությունները, որոնք ընձեռնում է PrEP-ը ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում, և ընդհանուր առմամբ սեռական առողջության ոլորտում, նրա ներմուծման և պոտենցիալ օգտակարության հարցերը պետք է դրվեն բաց քննարկման, որին կմասնակցեն ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, առողջապահության ոլորտում աշխատող մասնագետներ, քաղաքականության ձևավորման մեջ պատասխանատու անձիք, ինչպես նաև այն կազմակերպությունները, որոնք արտադրում են ՀՌՎ դեղորայք: Մինևույն ժամանակ պետք է քայլեր ձեռնարկվեն PrEP-ի հասանելի դարձնելու համար:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ԼԳԲՏ եվրոպական կազմակերպությունների այս կոչը հասցեագրված առողջապահական համակարգի հաստատություններին և դեղագործական ընկերություններին, ուղղված է ՄԻԱՎ-ի կանխարգելմանը, սեռական առողջությանը և վարքագծի ձևավորման ոլորտում տարվող աշխատանքների բարելավմանը՝ կապված համասեռամուլների և այն տղամարդկանց առողջության հետ, ովքեր ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ և ենթարկվում են ՄԻԱՎ-ով վարակման ռիսկին:

**Որպես եվրոպական կազմակերպություններ մենք ցանկանում են հրապարակայնորեն հրավիրել ուշադրությունը հետևյալ հարցերի վրա՝**

- ՄԻԱՎ-ի վարակման դեպքերը Եվրոպայում շարունակում են աճել հատկապես խոցելի խմբերի մոտ (այդ թվում տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ, բանտարկյալները, ԹՆՕ-ները, մարմնավաճառները, տրանսգենդերները և միգրանտները):
- Անհրաժեշտ է բարելավել ՄԻԱՎ-ի կանխարգելման ռազմավարությունները և մեթոդները խոցելի խմբերի համար, ովքեր վարակման մեծ ռիսկի են ենթարկված:

- Անհրաժեշտ են կանխարգելման լրացուցիչ մեթոդներ, ինչպես նաև ռազմավարություններ, որոնք թույլ կտան արդունավետորեն համակցել դրանք: Դա միակ միջոցն է դադարեցնելու ՄԻԱՎ համաճարակը<sup>liv</sup>:
- PrEP-ի արդյունավետությունը ապացուցվել է բարձր որակի փորձարկումների միջոցով, որոնք կատարվել են Եվրոպայում: Արդյունքները ցույց են տվել, որ PrEP-ը կտրուկ նվազեցնում է ՄԻԱՎ-ի փոխանցման ռիսկը<sup>lv,lvii,lviii</sup>:
- PrEP-ը այժմ անհրաժեշտ է Եվրոպայում և մենք պահանջում ենք այն: PROUD- և IPERGAY-ի հետազոտությունների, ինչպես նաև այլ ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս PrEP-ի անհրաժեշտությունը այն մարդկանց համար, ովքեր ենթարկվում են ՄԻԱՎ-ով վարակման ռիսկին:
- PrEP-ը արդեն ոչ պաշտոնապես կիրառվում է: Այն չունի պատշաճ բժշկական վերահսկողություն: Խոցելի խմբերը պետք է ընտրելու հնարավորություն ունենան արդյոք ցանկանում են օգտագործել PrEP, և այդ մոտեցումը պետք է նրանց համար անվտանգ լինի<sup>lviii,lix,li</sup>:

### **Մենք կոչ ենք անում բոլոր շահագրգիռ կողմերին PrEP-ը կիրառել հասանելի Եվրոպայում**

- Մենք կոչ ենք անում Gilead կազմակերպությանը՝ Truvada® դեղարայքի արտադրողին, հայտ ներկայացնել գրանցվելու դեղորայքներով զբաղվող Եվրոպական գործակալությունում (EMA) Truvada® դեղորայքը որպես ՄԻԱՎ-ի նախակոնտակտային կանխարգելում օգտագործելու նպատակով: Մենք կոչ ենք անում EMA -ին պարզաբանել այն քայլերը, որոնք հասանելի կդարձնեն PrEP –ը:
- Մենք կոչ ենք անում դեղագործական ընկերություններին աշխատել անկախ հետազոտական ընկերությունների հետ PrEP-ի հասանելիությունը մեծացնող ծրագրերի շրջանակներում PrEP-ի ներմուծման հետ կապված հետազոտություններ իրականացնելու նպատակով:
- Մենք կոչ ենք անում հիվանդությունների վերահսկման և կանխարգելման Եվրոպական կենտրոնին (ECDC) ստեղծել աշխատանքային խումբ, որը PrEP-ի օգտագործման

ուղեցույցներ կմշակի: Խումբը պետք է ընդգրկի քաղաքացիական հասարակության և կլինիկական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Այս ուղեցույցները պետք է՝

1. Որոշեն այն դեպքերը, երբ PrEP-ը բերում է ամենամեծ օգուտը
  2. Պարունակի տեղեկատվություն Եվրոպայում PrEP-ի հասանելիությունը ապահովող ռազմավարությունների մասին
  3. Ստեղծել հետևողական ծրագրեր այն մարդկանց համար, ովքեր ընդունում են ՀՌՎ-ն որպես նախակոնտակտային կանխարգելում:
- Մենք կոչ ենք անում եվրոպական երկրների ղեկավարություններին ուսումնասիրելու տարբեր ռազմավարություններ, որոնք կփոխհատուցեն PrEP-ի ծախսերը այն մարդկանց համար, ովքեր դրա կարիքը ունեն:
  - Մենք պահանջում ենք ինտեգրել PrEP-ը ավելի ընդլայնված և ամբողջական ծրագրերի մեջ սեռական առողջությունը բարելավելու նպատակով, որը նաև պետք է իր մեջ ներառի խորհրդատվություն, թեստավորում, բուժումը և այն վարակների համար պատվաստում, որոնք փոխանցվում են սեռական ճանապարհով, պահպանակների տրամադրում, նախակոնտակտային կանխարգելում և փոխօգնության խմբեր: Կանխարգելման միջոցներից ոչ մեկը չպետք է մրցակցության մեջ լինի մյուսների հետ:

ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում համակցված մոտեցումների կիրառման հաջողության բանալին հանդիսանում է գիտական հետազոտությունների և գիտական հիմք ունեցող ռազմավարությունների առկայությունը: Գիտական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է համագործակցեն՝ նման տվյալներ ստանալու և տրամադրելու նպատակով: Խոցելի խմբերը կարիք ունեն նոր հնարավորությունների վերաբերյալ ակտուալ տեղեկատվության, որոնք կօգնեն նրանց ընդունելու լավագույն որոշումներ առողջության վիճակը բարելավելու և հասարակության մեջ երջանիկ կյանք վարելու համար:

## END NOTES

- i. See <http://www.prepaccess.org.uk/>
- ii. [www.proud.mrc.ac.uk/](http://www.proud.mrc.ac.uk/)
- iii. [www.proud.mrc.ac.uk/](http://www.proud.mrc.ac.uk/)
- iv. Transformation of HIV from pandemic to low-endemic levels: a public health approach to combination prevention; Alexandra Jones et al. *The Lancet* – 19 July 2014 (Vol. 384, Issue 9939, Pages 272-279 ) DOI: 10.1016/S0140-6736(13)62230-8
- v. Grant RM et al. Results of the iPrEx open-label extension (iPrEx OLE) in men and transgender women who have sex with men: PrEP uptake, sexual practices, and HIV incidence. 20th International AIDS Conference, Melbourne, abstract TUAC0105LB, 2014.
- vi. PROUD study statement. PROUD study interim analysis finds pre-exposure prophylaxis (PrEP) is highly protective against HIV for gay men and other men who have sex with men in the UK. (16 October 2014).  
<http://www.proud.mrc.ac.uk/PDF/PROUD%20Statement%20161014.pdf> (PDF)
- vii. IPERGAY press statement. Un grand succes dans la lutte contre le VIH./SIDA. Un médicament pris au moment des rapports sexuels réduit efficacement le risque d'infection. (29 October 2014). <http://www.ipergay.fr> Press release (English version) IPERGAY October 2014: <http://i-base.info/wp-content/uploads/2014/10/Press-release-IPERGAY-october-2014.doc> (Word.doc)
- viii. Knowledge, Willingness And Intention To Use Pre-Exposure Prophylaxis – Prep – In France (2014). Preliminary Results From A Community-Based Survey; Trenado E. at al, HIV Research for Prevention conference, Cape Town, 28-31 October 2014; Poster LB, P19.07 LB.
- ix. Would you use PrEP? Results from a national survey among MSM in Italy; Corbelli et al. <http://www.plus-onlus.it/ricerca-plus-useresti-prep/>
- x. Prospective Attitudes to HIV-Pre-Exposure-Prophylaxis (PrEP); The Sigma Research: [http://www.sigmaresearch.org.uk/files/Sigma\\_Panel\\_INSIGHT\\_BLAST\\_6\\_PreExposure\\_Prophylaxis.pdf](http://www.sigmaresearch.org.uk/files/Sigma_Panel_INSIGHT_BLAST_6_PreExposure_Prophylaxis.pdf)